Բ. ՓԱՆՈՍԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Գիշերը անցուցի անհանգիստ, տենդային դրութեան մէջ: Առաւօտեան զարթեցայ խիստ ուշ: Ասլանը սենեակում չէր, չէր երեւում եւ վարպետ Փանոսը: Ես ինձ բաւական թոյլ էի զգում. մարմինս կոտրատւում էր, իսկ գլխիս մէջ տիրում էր մի տեսակ թմրութիւն, մի տեսակ մառախուղ: Գիշերոայ բոլոր անցքերը երեւում էին ինձ ինչպէս մի երազ: Կոկորդիս մէջ ցաւ էի զգում եւ, նայելով հայելու մէջ, տեսնում էի պարանոցիս վրայ բաց-կապտագոյն բծեր: Շապիկս բուրում էր դեղորայքի հոտով: Երեւում էր, գիշերը Ասլանը իմ վրայ գործ էր դրել բժշկական միջոցներ:

Վարպետի գործարանի փոքրիկ աշակերտներից մէկը ջուր բերեց, լոացոեցայ, հագնոեցայ եւ դուրս եկայ պատշգամբի վրայ:

Այստեղից բացոեցան իմ առջեւ հրաշալի տեսարաններ. երեւում էին շրջակայ լեռները իրանց գեղեցիկ հովիտներով, երեւում էր քաղաքը իր կրկնակի պարիսպներով ու աշտարակներով, երեւում էին քաղաքի բարձր սիւնաձեւ մինարեթները եւ հայոց եկեղեցիների գմբէթները, երեւում էր միջնաբերդը իր ահռելի, հսկայական կերպարանքով, երեւում էր ծովը իր մանիշակագոյն հարթ տարածութեամբ: Իմ սիրտը տրոփում էր անհամբերաթիւնից, թէ երբ պէտք է մոից, շատ մօտից տեսնեմ այդ բոլորը: Գիշերով հասած լինելով Այգեստան՝ ես դեռ ոչինչ չէի տեսել: Իրաւ, գեղեցիկ, շատ գեղեցիկ էր քաղաքի այդ ծառազարդ արոարձանը: Այգիների ծառերը, ծանրաբեռնոած գոյնզգոյն պտուղներով, առաւօտեան լուսով աւելի սքանչելի էին երեւում, քան թէ գիշերը: Արեգակը հսկում էր վերեւից: Այժմ նրա լոյսի երկիւղից գիշերային գողերը դադարել էին կողոպտելուց: Այժմ հերթը հասել էր ցերեկոայ գողերին: Ահա ճնճղուկների ահագին երամը խառնաձայն աղմուկով իջաւ ծիրանի ծառի վրայ: Նրա տերեւախիտ ճիւղերը թեքոեցան այդ փոքրիկ աւազակների ծանրութեան ներքոյ: Ճլվլում են, ոստոստում են եւ ուրախ, յաղթական աղաղակներով կտցահարում են իրանց քաղցր, հիւթալի աւարը: Հեռոից ճռնչում է այգեպանի ճօճանակը, եւ չարաճճի խումբը միանգամից թողնում է ծառը: Ինչ զանազանութիւն քրդերի եւ այդ անմեղ արարածների մէջ: Երկուսն էլ ապրում են ուրիշի վաստակով: Բայց ճնճղուկներն աւելի բարեխիղճ են, դրանք գոնէ չեն ոչնչացնում ծառերը: Այդ համեմատութիւնն էի անում, երբ վերադարձաւ Ասլանը: Նրան տեսնելով, ես մտայ սենեակը:

— Ես չկամեցայ քեզ զարթեցնել, լաւ է, որ վեր ես կացել, — ասաց նա բժշկի եղանակով, որ մի անծանօթ հիւանդի մօտ այցելութիւն է գործում: — Մօտ եկ, տեսնեմ: